

### 5.5. ՀՀ շրջակա միջավայրի 2014 թվականի հուլիս ամսվա աղտոտվածության մշտադիտարկում

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, ՀՀ շրջակա միջավայրը 2014թ. հուլիսին ունեցել է հետևյալ բնութագիրը.

**5.5.1. Օդային ավազանի որակի մշտադիտարկում:** Երևան քաղաքի 7 դիտակայաններում շուրջօրյա ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Ակտիվ նմուշառման միջոցով ընդհանուր առմամբ վերցվել է օդի 866 փորձանմուշ: Որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Քաղաքի մթնոլորտային օդի փորձանմուշներում ավտոմատ կայանների միջոցով որոշվել են ածխածնի մոնօքսիդի, ազոտի օքսիդների (ազոտի մոնօքսիդ, ազոտի երկօքսիդ և ընդհանուր օքսիդներ) և ծծմբի երկօքսիդի պարունակությունները: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 9 476, ազոտի օքսիդների համար՝ 2 604, ծծմբի երկօքսիդի համար՝ 20 992 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքերով գրանցված տվյալների, մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Քաղաքի պասիվ նմուշառման 47 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 363 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

**Գյումրի քաղաքի** դիտակայանում շուրջօրյա ակտիվ նմուշառման եղանակով փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 24 փորձանմուշ: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 2.1 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 24 դիտակետերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար վերցվել է օդի 192 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.8 անգամ:

**Վանաձոր քաղաքի** 3 դիտակայաններում շուրջօրյա ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և փոշու պարունակությունները: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 279 փորձանմուշ: Որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Քաղաքի պասիվ նմուշառման 24 դիտակետերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար վերցվել է օդի 191 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.5 անգամ:

**Ալավերդի քաղաքի** 3 դիտակայաններում շուրջօրյա ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 248 փորձանմուշ: Որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 5 336, ազոտի օքսիդների համար՝ 2 604 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքի տվյալների, ավտոմատ կայանի հարակից տարածքի մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշված նյութերից ազոտի օքսիդների միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են

թույլատրելի նորմաների սահմաններում: Քաղաքում և նրա շրջակայքում պասիվ նմուշառման 38 դիտակետերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար վերցվել է օդի 304 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 2.0 անգամ:

**Հրազդան քաղաքի** դիտակայանում շուրջօրյա ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և ցեմենտի փոշու պարունակությունները: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 93 փորձանմուշ: Որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Քաղաքի պասիվ նմուշառման 20 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 160 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

**Արարատ քաղաքի** դիտակայանում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար շուրջօրյա ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է օդի 31 փորձանմուշ: Ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.4 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 12 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 96 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

**Ծաղկաձոր քաղաքի** պասիվ նմուշառման 14 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 112 փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Քաղաքի մշտադիտարկման կայանում շուրջօրյա ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 93 փորձանմուշ: Որոշված նյութերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Քաղաքում կատարվել է նաև տեղումների (անձրև) 4 նմուշառում, վերցված 4 փորձանմուշներում որոշվել են 36-ական ցուցանիշ:

**Ծաղկաձոր քաղաքի տեղումներում (անձրև) վերահսկվող որոշ նյութերի պարունակությունը, 2014թ. հուլիս**

մգ/դմ<sup>3</sup>

Ցուցանիշներ	Նմուշների վերցման ամսաթիվը			
	1-2	6-7	9-10	31-7
Զրածնային ցուցիչ (pH)	7.44	7.52	7.34	7.06
Տեսակարար էլեկտրահաղորդականություն (μՄիմ/սմ)	56.6	75.4	77.0	30.8
Սուլֆատ իոն	2.97	6.58	1.71	1.93
Քլորիդ իոն	0.44	1.13	0.36	0.28
Նիտրատ իոն	3.93	5.32	1.63	1.92
Ֆտորիդ իոն	0.04	0.03	0.01	0.02
Ամոնիում իոն	1.69	2.06	1.05	0.91

**Սևան, Կապան և Քաջարան քաղաքների** պասիվ նմուշառման համապատասխանաբար 15, 11 և 15 դիտակետերի միջոցով վերցվել է մթնոլորտային օդի 120, 88 և 120 փորձանմուշ: Սյունիք գյուղի (ՀՀ Սյունիքի մարզ) պասիվ նմուշառման 9 դիտակետերի միջոցով վերցվել է մթնոլորտային օդի 72 փորձանմուշ: Նշված համայնքների մթնոլորտային օդի

**5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ**

փորձանմուշներում որոշված ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

**Ամբերդ գյուղում** (ՀՀ Արմավիրի մարզ) տեղադրված կայանում հուլիս ամսին վերցվել է օդի 93 և փոշու 31 փորձանմուշ: Օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի, իսկ փոշու փորձանմուշներում՝ քլոր, նիտրատ, սուլֆատ, ամոնիում իոնների և 21 այլ քիմիական տարրերի պարունակությունները: Ամոնիակի միջին ամսական կոնցենտրացիան դիտվել է թույլատրելի նորմայի սահմանում: Ավտոմատ սարքի միջոցով գետնամերձ օդոնի պարունակության որոշման համար կատարվել է օդի 865 դիտարկում: Գյուղում կատարվել է նաև տեղումների (անձրև) 8 նմուշառում, վերցված 8 փորձանմուշներում որոշվել են 36-ական ցուցանիշ:

**Ամբերդ գյուղի կայանի հարակից տարածքի տեղումներում (անձրև) վերահսկվող նյութերի պարունակությունը, 2014թ. հուլիս**

*մգ/դմ<sup>3</sup>*

Ցուցանիշներ	Նմուշների վերցման ամսաթիվը					
	5	6	13-14	14-15	21	28
Ջրածնային ցուցիչ (pH)	7.50	7.51	6.90	6.93	6.63	6.92
Տեսակարար էլեկտրահաղորդականություն (μՄիմ/սմ)	130.5	60.4	49.2	52.1	37.3	62.4
Սուլֆատ իոն	13.86	5.39	2.81	3.59	3.46	6.43
Քլորիդ իոն	3.34	1.01	0.60	1.25	0.87	1.06
Նիտրատ իոն	8.48	6.01	4.10	3.24	0.72	0.85
Ֆտորիդ իոն	0.09	0.04	0.04	0.07	0.06	0.04
Ամոնիում իոն	4.21	0.99	2.12	1.53	0.49	0.88

**5.5.2. Մակերևութային ջրերի որակի մշտադիտարկում:** Հուլիսին մակերևութային ջրերի նմուշառ կատարվել է հանրապետության 41 գետերի, Արփա-Սևան ջրատարի, Արփիլճի, Ախուրյանի, Ապարանի, Ազատի, Կեչուտի ջրամբարների և Երևանյան լճի 105 դիտակետերում: Վերցված 105 փորձանմուշներում որոշվել է 40-ական ցուցանիշ:

**ՀՀ գետավազանային ջրերի քիմիական կարգավիճակը, 2014թ. հուլիս**

Ջրավազանային կառավարման տարածք	Գետավազան	Ջրային օբյեկտ	Դիտակետի համարը	Դիտակետի տեղադրությունը	Քիմիական կարգավիճակի դասը	Ըստ տվյալ ցուցանիշի
Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք	Դեբեդ գետի ավազան	Փամբակ	1	Հարթագյուղ գյուղից 0.5 կմ վերև	2	-
			2	ք.Սպիտակից 0.5 կմ ներքև	4	Նիտրատ իոն
			3	ք.Վանաձորից 0.6 կմ վերև	3	Նիտրիտ իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն
			4	ք.Վանաձորից 4.5 կմ ներքև	5	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն
		Դեբեդ	5	Մարցիգետի թափման կետից 0.5 կմ ներքև	2	-
			6	ք.Այրումից 0.5 կմ վերև	3	Կախված մասնիկներ
			7	ՀՀ պետական սահմանի մոտ	3	Նիտրատ իոն, ֆոսֆատ իոն
		Չորագետ	8	ք.Ստեփանավանից 0.5 կմ վերև	2	-
			10	Գետաբերան	2	-
		Տաշիր	11	Միխայելովկա գյուղից 0.5 կմ վերև	2	-
			12	Մարատովկա գյուղից 0.5 կմ ներքև	3	Նիտրատ իոն, ֆոսֆատ իոն
		Մարցիգետ	13	Գետաբերան	3	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն
		Ախթալա	14	Գետաբերան	5	Ցինկ, կադմիում, մանգան, սուլֆատ իոն
		Գարգառ	210	Կուռթան գյուղի շրջանում	2	-
342	Ակունք		2	-		
Շնող	343	Գետաբերան	2	-		
			5	Մոլիբդեն		

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ջրավազանային կառավարման տարածք	Գետավազան	Ջրային օբյեկտ	Դիտակետի համարը	Դիտակետի տեղադրությունը	Քիմիական կարգավիճակի դասը	Ըստ տվյալ ցուցանիշի
Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք	Աղստեղ գետի ավազան	Աղստեղ	15	ք.Դիլիջանից 1.2 կմ վերև	3	Ամոնիում իոն
			16	ք.Դիլիջանից 0.5 կմ ներքև	4	Ամոնիում իոն, նիտրիտ իոն
			17	ք.Իջևանից 1 կմ վերև	3	Նիտրիտ իոն
			18	ՀՀ պետական սահմանի մոտ	4	Նիտրիտ իոն
		Գետիկ	19	ք.Ճամբարակից 0.5 կմ վերև	5	Ամոնիում իոն
			20	Գետաբերան	4	ԹՔՊ
Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք	Ախուրյան գետի ավազան	Ախուրյան	31	Ամասիա գյուղից 0.5 կմ վերև	2	-
			32	Ամասիա գյուղից 1 կմ ներքև	5	Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն
			33	ք.Գյումրիից 0.8 կմ վերև	3	Ընդհանուր ֆոսֆոր
			34	ք.Գյումրիից 5 կմ ներքև	5	Նիտրիտ իոն
			35	Երվանդաշատ գյուղից 0.5 կմ ներքև	4	Ֆոսֆատ իոն
		Աշոցք	36	Արտաշեն գյուղից 0.5 կմ վերև	2	-
			37	Գետաբերան	2	-
	Կարկաչուն	38	Գետաբերան	4	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն	
		Մեծամոր	40	ք.Վաղարշապատից 10 կմ հարավ	3	ԹՔՊ, նիտրիտ իոն
			41	ք.Վաղարշապատից 11 կմ հարավ-արևելք	4	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն
	42		Ռանչպար գյուղից 0.5 կմ ներքև	3	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	
	Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք	Քասախ գետի ավազան	Քասախ	43	ք.Ապարանից 0.5 կմ վերև	2
44				ք.Ապարանից 0.5 կմ ներքև	5	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն
45				ք.Աշտարակից 1 կմ վերև	2	-
46				ք.Աշտարակից 3.5 կմ ներքև	2	-
47				Գետաբերան	4	Նիտրատ իոն, ֆոսֆատ իոն
Գեղարտո			48	Արագած գյուղից 0.5 կմ վերև	2	-
Հախվերդ			50	Փարպի գյուղից 0.5 կմ ներքև	2 5	- Ֆոսֆատ իոն
			Հրազդան գետի ավազան (միջին ներքին հոսանք)	51	Գեղամավան գյուղի մոտ	3
52				Քաղսի գյուղից 0.5 կմ ներքև	3	Ֆոսֆատ իոն
53				Արգել գյուղից 0.5 կմ ներքև	3	Ֆոսֆատ իոն
54		Արգելի ՀեՎ-ից 0.5 կմ ներքև		3	Նիտրատ իոն, ֆոսֆատ իոն	
225		Գեղանիստ գյուղի մոտ		5	Լուծված թթվածին, ԹԿՊ <sub>5</sub> , ընդհանուր ֆոսֆոր	
55		Երևան քաղաքից 6 կմ ներքև, Դարբնիկ գյուղի մոտ		5	Լուծված թթվածին, ԹԿՊ <sub>5</sub> , ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	
56		Գետաբերան		5	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	
Գետառ		59	Գետաբերան	5	Ֆոսֆատ իոն, սուլֆատ իոն	
Մարմարիկ գետի ավազան		Մարմարիկ	57	Հանքավան գյուղից 0.5 կմ վերև	2	-
			58	Գետաբերան	2	-
Ծառաղբյուր գետի ավազան		Ծառաղբյուր	311	ք.Ծաղկաձորից վերև	3	Ֆոսֆատ իոն
			312	ք.Ծաղկաձորից ներքև	5	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ջրավազանային կառավարման տարածք	Գետավազան	Ջրային օբյեկտ	Դիտակետի համարը	Դիտակետի տեղադրությունը	Քիմիական կարգավիճակի դասը	Ըստ տվյալ ցուցանիշի
Սևանի ջրավազանային կառավարման տարածք	Ձկնագետ գետի ավազան	Ձկնագետ	60	Մեմոնովկա գյուղից 0.5 կմ վերև	2	-
			61	Գետաբերան	2	-
	Մասրիկ գետի ավազան	Մասրիկ	62	Վերին Շորժա գյուղից 0.5 կմ վերև	2	-
			63	Գետաբերան	5	Ֆոսֆատ իոն
	Սոթք գետի ավազան	Սոթք	64	Հանքավայրից 0.5 կմ վերև	2	-
			65	Գետաբերան	3	Ֆոսֆատ իոն
	Վարդենիսի լեռներից սկսվող գետեր	Կարճաղբյուր	66	Աղբյուրաձոր գյուղից 0.5 կմ վերև	2	-
			67	Գետաբերան	3	Ֆոսֆատ իոն
		Վարդենիս	69	Վարդենիկ գյուղից 0.5 կմ վերև	2	-
			70	Գետաբերան	3	Ֆոսֆատ իոն
		Մարտունի	71	Գեղիվիտ գյուղից 0.5 կմ վերև	2	-
			72	Գետաբերան	4	Ֆոսֆատ իոն
	Գեղամա լեռներից սկսվող գետեր	Արգիճի	73	Լեռնակերտ գյուղից 0.5 կմ վերև	2	-
			74	Գետաբերան	2	-
		Ծակքար	75	Գետաբերան	3	Ֆոսֆատ իոն
		Շողվակ	76	Գետաբերան	3	ԹՔՊ, ֆոսֆատ իոն
77			Ծաղկավան գյուղից 0.5 կմ վերև	2	-	
Գավառագետ	78	Գետաբերան	3	Նիտրատ իոն, ֆոսֆատ իոն		
Արարատյան ջրավազանային կառավարման տարածք	Վեղի գետի ավազան	Վեղի	80	Ուրցաձոր գյուղից 0.5 կմ վերև	2	-
	Արփա գետի ավազան	Արփա	83	ք.Ջերմուկից 0.5 կմ վերև	2	-
			84	ք.Վայքից 0.5 կմ վերև	3	ԹՔՊ, ամոնիում իոն
			85	ք.Վայքից 0.5 կմ ներքև	2	-
			86	ք.Եղեգնաձորից 0.5 կմ վերև	3	ԹՔՊ
			87	Արենի գյուղից 0.5 կմ ներքև	2	-
		Եղեգիս	88	Շատին գյուղից 0.5 կմ ներքև	4	ԹՔՊ
	Արփա-Սևան ջրատար	68	Ծովինար գյուղից 0.7 կմ վերև	2	-	
Հարավային ջրավազանային կառավարման տարածք	Մեղրի գետի ավազան	Մեղրիգետ	89	ք.Մեղրիից 0.5 կմ վերև	3	ԹՔՊ
			90	Գետաբերան	3	Ամոնիում իոն
	Ողջի գետի ավազան	Ողջի	91	ք.Քաջարանից 1.7 կմ վերև	2	-
			92	ք.Քաջարանից 1.8 կմ ներքև	3	Ամոնիում իոն, մանգան, վանադիում, երկաթ, սուլֆատ իոն
					5	Մոլիբդեն
			93	ք.Կապանից 0.8 կմ վերև	4	Վանադիում
		94	ք.Կապանից 6.8 կմ ներքև	5	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մոլիբդեն, մանգան	
	Արծվանիկ	96	Գետաբերան	5	Մոլիբդեն, մանգան, վանադիում, սուլֆատ իոն	
	Գեղի գետի ավազան	Գեղի	97	Աջաբաջ գյուղից 0.5 կմ վերև	2	-
			98	Գետաբերան	2	-
	Որոտան գետի ավազան	Որոտան	99	Գորայք գյուղից 0.5 կմ վերև	2	-
			100	ք.Սիսիանից 1 կմ վերև	3	Ֆոսֆատ իոն
			101	ք.Սիսիանից 2 կմ ներքև	3	Ֆոսֆատ իոն
102			Տաթև Հե՛Կ գյուղից 0.5 կմ ներքև	3	Ֆոսֆատ իոն	
Սիսիան գետի ավազան	Սիսիան	103	Արենիս գյուղից 0.5 կմ վերև	2	-	
		104	Գետաբերան	3	ԹՔՊ, ֆոսֆատ իոն	
Գորիս գետի ավազան	Գորիսգետ	106	ք.Գորիսից 3 կմ վերև	2	-	
		107	ք.Գորիսից 1.5 կմ ներքև	5	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն	

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

ՀՀ ջրամբարների ջրերի քիմիական կարգավիճակը, 2014թ. հուլիս

Ջրային օբյեկտ	Դիտակետի համարը	Դիտակետի տեղադրությունը	Քիմիական կարգավիճակի դասը	Ըստ տվյալ ցուցանիշի
Արփիլճի ջրամբար	109	Ամբարտակի մոտ	3	ԹՔՊ, ֆոսֆատ իոն
Ախուրյանի ջրամբար	110	Ամբարտակի մոտ	3	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն
Ապարանի ջրամբար	111	Ամբարտակի մոտ	1	-
Երևանյան լիճ	112	Ամբարտակի մոտ	4	Նիտրիտ իոն
Ագատի ջրամբար	113	Ամբարտակի մոտ	1	-
Կեչուտի ջրամբար	114	Ամբարտակի մոտ	2	-

Արաքս գետի աղտոտվածության վիճակը, 2014թ. հուլիս

Ջրային օբյեկտի անվանումը	Մետրաձև հատվածը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները											
			1/ՕՊ, ՍՕՊ	1/ՕՊՊ, ՍՕՊՊ	1/ՆՆՊ, ՍՆՆՊ	1/ՆՆՊՊ, ՍՆՆՊՊ	1/ՆՆՊՊՊ, ՍՆՆՊՊՊ	1/ՆՆՊՊՊՊ, ՍՆՆՊՊՊՊ	1/ՆՆՊՊՊՊՊ, ՍՆՆՊՊՊՊՊ	1/ՆՆՊՊՊՊՊՊ, ՍՆՆՊՊՊՊՊՊ	1/ՆՆՊՊՊՊՊՊՊ, ՍՆՆՊՊՊՊՊՊՊ	1/ՆՆՊՊՊՊՊՊՊՊ, ՍՆՆՊՊՊՊՊՊՊՊ	1/ՆՆՊՊՊՊՊՊՊՊՊ, ՍՆՆՊՊՊՊՊՊՊՊՊ	
Արաքս	25	Սուրմալու գյուղի դիմաց	-	-	-	-	0.8342	0.0033	0.0057	0.0562	0.0119	0.7749	-	-
	26	Հրազդան գետի թափման կետից վերև	3.52	-	-	0.033	0.9317	0.0031	0.0123	0.0751	0.0136	0.7115	0.0027	153.204
	27	Հրազդան գետի թափման կետից ներքև	-	-	1.732	0.176	-	0.0023	0.0095	0.0475	0.0152	0.2104	0.0024	152.675
	28	Արմաշ գյուղից 0.5 կմ ներքև	-	-	-	0.154	-	0.0027	0.0101	0.0235	0.0153	0.1375	0.0023	151.043
	29	ք.Ագարակից 2 կմ հարավ	-	-	-	0.052	-	0.0019	0.0051	0.0122	0.0159	0.1441	0.0046	221.400
	30	ք.Ագարակից 2.5 կմ հարավ-արևելք	-	38	-	0.059	-	0.0043	0.0050	-	0.0147	0.0899	0.0016	221.853